

Գործի ID`

Վերոնշյալ վարչաշրջանի գործակալությունն արձանագրություններ ունի, որոնք ցույց են տալիս, որ դուք պատասխանատվություն եք կրում չվճարված գումարային մնացորդի համար, որն առաջացել է գերթողարկված CalFresh նպաստների արդյունքում (նախկինում հայտնի որպես «Մննդամթերքի կտրոններ») ծրագիր):

ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՅԱՆՋՎՈՂ ՄԱՑՈՐԴ` \$

Վերոնշյալ վարչաշրջանի գործակալությունը կատարել է հավաքագրման համար անհրաժեշտ ջանքերը, ներառյալ` ուղարկելով նամակ-պահանջ ծանուցելով ձեզ հայցադիմումի և հայցի վերաբերյալ արդար լսման ձեր իրավունքի մասին: Եթե չեք վճարում ձեր պարտքը կամ չեք ձեռնարկում այլ գործողություններ այս ծանուցման օրվանից 60 օրվա ընթացքում, վարչաշրջանի գործակալությունը ձեր պարտքը կներկայացնի Միացյալ Նահանգների գանձապետարանի վարչության (գանձապետարան) գանձապետարանի հատուցման ծրագրին (TOP) հավաքագրման համար: Այս գործողությունը լիազորված է 1982 թվականի «Պարտքերի հավաքագրման մասին» օրենքով, 1996 թվականի «Պարտքերի հավաքագրման բարելավման մասին» օրենքով, դաշնային կանոնակարգերի մասին օրենսգրքի 7 C.F.R. 273.18(n) կետով, և Նահանգային կանոնակարգերի օրենսգրքի 20-400 բաժիններով: Ձեր պարտքը TOP ներկայացվելու դեպքում, գանձապետարանը կնվազեցնի կամ պահում կկատարի ձեր պարտքի գումարի չափով` դաշնային վճարներից, որոնց դուք իրավունակ եք: Հատուցման ենթակա դաշնային վճարները ներառում են`

- Դաշնային եկամտահարկի վերադարձ, ներառյալ ցանկացած վաստակած հարկային վարկեր;
- Ձեր դաշնային աշխատավարձի մինչև 15%-ը, ներառյալ ռազմական աշխատավարձը,
- Ձեր դաշնային կենսաթոշակի մինչև 25%-ը;
- Չինվորական կենսաթոշակի վճարում,
- Կապալառուի/մատակարարի վճարումներ, և/կամ
- Այլ դաշնային վճարումներ

Բացի այդ, գանձապետարանն իրավասու է ավելացնել տուգանքներ, տույժեր կամ այլ ծախսեր ձեր չվճարված պարտքին:

TOP-ից խուսափելու համար, դուք պետք է դիմեք վերոնշյալ վարչաշրջանի գործակալություն և կատարեք հետևյալներից մեկը` ծանուցման օրվանից 60 օրվա ընթացքում`

- ՄԱՐԵԸ ՁԵՐ ՊԱՐՏԵԸ. ձեր պարտքը մարելու համար ուղարկեք բանկային կտրոն կամ դրամական փոխանցում, որը վճարվում է սույն ծանուցման մեջ նշված հետևյալ վարչաշրջանի գործակալությանը, այն ամբողջ գումարի համար, որ դուք պարտք եք, կամ
- ՀԱՄԱՁԱՅՆԵԸ ՄԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻՆ. Եթե դուք ի վիճակի չեք մարել ձեր պարտքն ամբողջությամբ, ապա դուք պետք է դիմեք սույն ծանուցման մեջ նշված վարչաշրջանի գործակալությանը և համաձայնեք մարման ընդունելի սխեմայի հետ, և կատարեք մարման սխեմայով պահանջվող վճարումները, կամ

- **ՊԱՅՄԱՆՁԵՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ**. Եթե դուք կարծում եք, որ ամբողջ պարտքը կամ դրա մի մասը ժամկետանց չէ, կամ ենթակա չէ կատարման օրենքով, ապա դուք պետք է ապացույցներ ուղարկեք սույն ծանուցման մեջ նշված վարչաշրջանի գործակալությանը՝ ձեր դիրքորոշումը հիմնավորելու համար: Ձեզ կտեղեկացնեն ձեր պարտքի վերաբերյալ վարչաշրջանի որոշման մասին: Որոշ հնարավոր պատճառներ, թե ինչու կարող եք չհամաձայնել պարտքի հետ, հետևյալն են՝ (1) դուք երբևէ չեք ստացել CalFresh, (2) որպես ժամկետանց ներկայացված գումարը ճիշտ չէ, կամ (3) վարչաշրջանը չի գործել նահանգային օրենքների և CalFresh կանոնակարգերին համապատասխան՝ ձեր պարտքը հաշվարկելիս, կամ
- **ՄԱՆԿԱՑՈՒՄ**. Եթե դուք սնանկ եք ճանաչվել և սնանկության ավտոմատ արգելանքն ուժի մեջ է, ապա դուք ենթակա չեք հատուցման կամ այլ հավաքագրման գործողությունների, քանի դեռ այդ կարգավիճակն ուժի մեջ է: Ինդիում ենք հայտնել սույն ծանուցման մեջ նշված վարչաշրջանի գործակալությանն՝ ուղարկելով ապացույցներ սնանկ լինելու վերաբերյալ:

Եթե դուք ներկայացնում եք համատեղ եկամտահարկի վերադարձի հայտարարագիր և գերթողարկման պահին ձեր ամուսինը/կինը չի հանդիսացել CalFresh տնային տնտեսության անդամ, ապա դուք պետք է դիմեք Ներքին եկամտունների ծառայություն (IRS) ձեր եկամտահարկի հայտարարագիրը ներկայացնելուց առաջ: IRS-ը ձեզ կտեղեկացնի քայլերի մասին՝ ձեռնարկելու եկամտահարկի վերադարձման մասնաբաժինը պաշտպանելու համար, որը կարող է վճարվել ձեր ամուսնու/կնոջը, ով հնարավոր է չի հանդիսանում Միացյալ Նահանգների կառավարության իրավազանց պարտապան:

Եթե դուք դաշնային աշխատող եք, ապա ձեր ներկայիս զուտ աշխատավարձն ենթակա է նվազեցման, եթե չեք վճարում ձեր պարտքը կամ ձեռնարկում՝ սույն ծանուցագրում նկարագրված գործողությունները: TOP-ի համաձայն, գանձապետարանը կնվազեցնի ձեր զուտ աշխատավարձը մինչև 15%-ի չափով, սկսած վճարման այն ժամանակահատվածից, երբ ձեր պարտքը ներկայացվել է դաշնային աշխատավարձի կամ վարձատրության հատուցման բաժնի, և շարունակելով յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածի համար մինչև ձեր պարտքն ամբողջությամբ վճարվի, այդ թվում՝ տույժերը, տուգանքները կամ այլ գանձումները: Եթե TOP-ի միջոցով պարզվում է, որ դուք ստանում եք դաշնային աշխատավարձ կամ վարձատրություն, ապա դուք իրավունք ունեք պահանջելու լուրձ վիճարկելու պարտքի գոյությունը կամ գումարը, կամ աշխատավարձի նվազեցման չափը: Ձեզ կտրամադրվի տեղեկատվություն, թե որտեղ պետք է ներկայացնել գրավոր պահանջ լսման համար, եթե TOP-ի միջոցով բացահայտվել է, որ դուք ստանում եք դաշնային աշխատավարձ կամ վարձատրություն: Լսման համար ժամանակին դիմում ներկայացնելը կհանդիսանա փոխհատուցման վարույթի սկիզբ՝ դաշնային աշխատավարձի կամ վարձատրության նվազեցման համար, այնուամենայնիվ, դա չի դադարեցնի այլ տեսակի դաշնային վճարումների նվազեցումը: Լսման գործի վերաբերյալ վերջնական որոշումը կիրառարակվի լսման գործով դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում: Որպես դաշնային աշխատող, եթե դուք տուգանքներից բացի գիտակցաբար կեղծ կամ անհիմն հայտարարություններ եք անում, ներկայացուցչություն կամ ապացույցներ եք ներկայացնում, ապա դուք կարող եք ենթարկվել կարգապահական գործողությունների: Ձեր պարտքը TOP ներկայացնելուց հետո, գանձապետարանը ձեր պարտքի գումարի չափով կնվազեցնի կամ պահում կկատարի ձեր իրավասության դաշնային ցանկացած վճարից և կարող է ձեր պարտքն ուղղորդել մասնավոր հավաքագրման կապալառուների կամ արդարադատության վարչություն: Գանձապետարանը կնվազեցնի 15%-ի չափով ձեր դաշնային վճարներից կամ նպաստներից ինչպիսիք են՝ սոցիալական ապահովության կենսաթոշակը, վերապրածների և անաշխատունակության նպաստներն, երկաթուղային աշխատողների կենսաթոշակային (2-րդ աստիճանից բացի) նպաստները, և «Սև թոք» հիվանդության նպաստները – Մաս Բ, պարտքը վերադարձնելու համար: Դուք իրավունք ունեք պահել առնվազն 750 ԱՄՆ դոլար ամսական կամ 9,000 ԱՄՆ դոլար տարեկան ձեր դաշնային վճարներից: Եթե դուք ստանում եք Լրացուցիչ ապահովության եկամտի (SSI) անաշխատունակության նպաստներ սոցիալական ապահովության վարչությունից, այդ նպաստները չեն պահվի ձեր պարտքը մարելու համար:

Եթե դուք գիտակցաբար կեղծ կամ անհիմն հայտարարություններ եք անում, ներկայացուցչություններ կամ ապացույցներ եք ներկայացնում, ապա կարող եք պատասխանատվություն կրել տուգանքների համար «Կեղծ պահանջների մասին» օրենքի (31Մ.Ն.Օ. §§ 3729-3731) կամ այլ կիրառելի օրենսդրական ակտերի ներքո, և/ կամ քրեական տուգանքների համար 18 Մ.Ն.Օ. §§ 286, 287, 1001, և 1002 հոդվածների կամ այլ կիրառելի օրենսդրական ակտերի ներքո:

Ձեր պարտքը TOP ներկայացնելուց առաջ, դուք կարող եք (1) զննել և պատճենել ձեր պարտքի հետ կապված վարչաշրջանի արձանագրությունները, (2) պահանջել վարչաշրջանի որոշման վերանայում, որ արդյոք այդ պարտքը ձերն է, և (3) կնքել մարման ընդունելի գրավոր համաձայնագիր: